ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼՅՈՇԱՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԼՂՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Անահիտ Սերգեյի Մելքումյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր,պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կարեն Արմոյի Ներսիսյան

Առաջատար կազմակերպություն՝ **Ակադենիկոս Իվան Վասիլևիչ Եղիազարովի անվան Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունիսի 26-ին ժամը 13^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի մայիսի 25-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Վերջին տարիներին կապված ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսական միջավայրի անորոշության մակարդակի բարձրացման և տնտեսական իրավիճակի փոփոխականության աճի հետ՝ ֆիրմաները, ներառյալ շինարարարության ոլորտում տնտեսական գործունեություն ծավալողները, գործում են բարձր ռիսկայնությամբ աչքի ընկնող միջավայրում:

ԼՂՀ-ի ձևավորումը համընկավ ԽՍՀՄ-ի փլուզման և դրանով պայմանավորված տնտեսական հարաբերությունների համակարգի արմատական կերպափոխումների հետ: Ձևավորման պահից սկսած՝ տեղի իշխանությունները որդեգրել են ներդրումների խրախուսման միջոցով շինարարության ոլորտի զարգացման ռազմավարություն, ինչը ենթադրում է բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորում և համապատասխան ենթակառուցվածքների զարգացում: Շինարարության ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը կխթանի մասնավոր ներդրումները՝ բազմարկչային էֆեկտով տարածվելով ողջ տնտեսական համակարգի վրա: Արդյունքում՝ կաճի զբաղվածության մակարդակն ու կկրճատվի աղքատությունը՝ հիմք ձևավորելով կայուն տնտեսական զարգացման համար:

Չնայած այն հանգամանքին, որ ԼՂՀ-ի շինարարության ոլորտը ներդրումային գրավչության մեծ ներուժ ունի, այդուհանդերձ բավականին ցածր է այս ոլորտում օտարերկրյա ներդրողների ակտիվության մակարդակը: Հիմնական պատճառը, թերևս, ռիսկայնության բարձր մակարդակն է, ինչը պայմանավորված է թե տարածաշրջանի քաղաքական անկայունությամբ, թե ԼՂՀ-ի աշխարհագրական դիրքով ու դրանով պայմանավորված տնտեսական մեկուսացվածությամբ:

Պետք է նկատել, որ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական ռիսկերի շրջանակը բավականին լայն է, ինչն իր ուղղակի ազդեցությունն է ունենում ներդրումային նախագծերի մշակման և իրականացման գործընթացների վրա: Շուկայական տնտեսության պայմաններում գործնականում անհնար է բացարձակ ճշգրտությամբ կանխատեսել, թե շինարարության ոլորտում հատկապես ինչ ռիսկերի կարող է բախվել ներդրողը, հատկապես, թե ինչպիսի ազդեցություն կունենան դրանք ներդրումային գործընթացի վրա: Այդ խնդիրներն առավել սուր դրսևորում ունեն ԼՂՀ-ում՝ պայմանավորված աշխարհաքաղաքական պայմաններով: Արդյունքում՝ շատ ներդրումային ծրագրեր, այդ թվում այնպիսինները, որոնք տնտեսապես հիմնավորված են և արդյունավետ, կյանքի չեն կոչվում:

ԼՂՀ տնտեսության վիճակի հետազոտությունը ցույց է տալիս, որ շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման համակարգում առկա են բազմաթիվ

խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը կարող են լինել միայն համալիր մոտեցումները: Դրա համար անհրաժեշտ է հանգամանալից վերլուծել այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են շինարարության ոլորտում ներդրումային ակտիվության դինամիկան, ներդրումային հոսքերի կառավարման մեխանիզմները, զարգացման ժամանակակից միտումներն ու մարտահրավերները:

Վերջին տարիներին ԼՂՀ-ի շինարարության ոլորտի զարգացման տեմպերը դինամիկ նվազում են՝ հիմնականում պայմանավորված ներդրումների ոչ բավարար մակարդակով: Արդյունքում՝ խորանում է ԼՂՀ-ի տնտեսության զարգացման անհամաչափությունն ի վնաս շինարարության ոլորտի: Իրավիճակը շտկելու առաջնահերթ քայլերից է շինարարության ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը, ինչն անհնար է առանց ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի մշակման և ներդրման: Ըստ էության, արդի պայմաններում առաջացել է ԼՂՀ-ի շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման նոր համակարգի մշակման անհրաժեշտություն, ինչն էլ պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության գլխավոր նպատակը ԼՂՀ-ի շինարարության ոլորտում առկա ռիսկերի առանձնահատկությունների հետազոտության հիման վրա ներդրումային ռիսկերի վերլուծության քանակական գնահատման նոր մոտեցումների ու կառավարման մեխանիզմների մշակումն է՝ ուղղված դրանց նվազեցմանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Նշված նպատակին համապատասխան աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի կառավարման արդի մեթոդների և առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- Ռիսկերի դասակարգում և շինարարության ոլորտում ներդրումային նախագծերի ռիսկերի նվազեցման մեխանիզմների բացահայտում,
- ԼՂՀ-ի շինարարության ոլորտի ներդրումային գրավչության գնահատում և հիմնական խնդիրների բացահայտում,
- Շինարարական կազմակերպությունների ներդրումային ռիսկերի կառավարման համատեքստում համակարգային և ծրագրանպատակային մեթոդաբանության կիրառման հնարավորությունների հետազոտություն,
- Տնտեսական զարգացման արդի պայմաններում ներդրումային նախագծերի ակտիվացման գործընթացում պետության դերի վերաիմաստավորում,
- Շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի գնահատման մեթոդաբանության վերլուծություն և կատարելագործում,
- Շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում,

➢ Շինարարական կազմակերպություններում նեդրումային ներուժի զարգացման ռազմավարության մշակում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ԼՂՀ շինարարության ոլորտում ներդրումային գործընթանցներն ու դրանց հետ կապված ռիսկերն են:Հետազոտության առարկան ԼՂՀ շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման գործընթացի հետ կապված հարաբերությունների համակարգն է:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են ծառայել շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման մեթոդների, մոտեցումների, սկզբունքների և մեխանիզմների վերլուծությանը նվիրված մի շարք օտարերկրյա և հայազգի հեղինակների հետազոտությունները: Հետազոտության թեմային առնչվող գիտական գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ համակողմանիորեն ուսումնասիրված չեն շինարարության ոլորտում դրսևորվող հիմնական ռիսկերն ու դրանց առանձնահատկությունները, հետևապես բացահայտված չեն, հատկապես շինարարության ոլորտում, ներդրումային ռիսկերի կառավարման հիմնախնդիրների հաղթահարման հիմնուղիները, ինչն էլ այս ոլորտում կատարվող հետազոտությունները դարձնում է առավել քան պահանջված:

Ատենախոսության նպատակներին համապատասխան, մեր կողմից կիրառվել են գիտական ճանաչողության (աբստրակցիայի, վերլուծության և համադրման, արտածման և մակածման, պատմական և տրամաբանական) մեթոդները, որոնք թույլ են տալիս գտնել գիտական դրույթների տրամաբանական կառուցվածքը, ընդգծել դրանց ուժեղ ու թույլ կողմերը: Դրանք հնարավորություն են տվել լուծել մեր կողմից առաջադրված խնդիրները:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության, էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների, քաղաքաշինության նախարարությունների կողմից հրապարակվող պաշտոնական տեղեկագրերը: Կատարված հետազոտության համար օրենսդրական հիմք են հանդիսացել ԱՀ օրենքները և նորմատիվաիրավական ակտերը:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության ընդհանուր նորույթն այն է, որ մշակվել և հիմնավորվել են շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ, ինչպես նաև բացահայտվել են ներդրումային-շինարարական գործունեության ենթակառուցվածքների զարգացման նոր ձևեր և ուղղություններ:

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում մշակվել և բացահայտվել են մի շարք դրույթներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները.

1. Մշակվել է ներդրումային ռիսկերի համալիր կառավարման կառուցակարգ՝ հիմնվելով շինարարության ոլորտում ներդրումային գործունեության խթանման ներուժի գնահատման հիմնական չափորոշիչների ձևավորման սկզբունքների վրա:

2. Բացահայտվել է ռիսկերի գնահատման նոր մոտեցում, որը տնտեսամաթեմատիկական մեթոդների կիրառման շնորհիվ հնարավորություն է տալիս որոշել յուրաքանչյուր գործոնի փոփոխությունը՝ դրանով իսկ նշանակալի չափով նպաստելով շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, հետևաբար նաև ոլորտի զարգացմանը:

3. Ռիսկ-մենեջմենթի յուրաքանչյուր փուլում ռիսկերի կառավարման հետ կապված որոշումների ընդունման ալգորիթմի հիման վրա մշակվել է ներդրումային ռիսկերի կառավարման կազմակերպչատնտեսական այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս կոորդինացնել կառավարման տարբեր մակարդակներում ռիսկերի կառավարմանն ուղղվող ջանքերը, ապահովել դրանց գործառնական միասնականությունն ու էականորեն բարձրացնել ռիսկերի ախտորոշման համակարգի ճկունության մակարդակը:

4. Մշակվել է ԼՂՀ շինարարության ոլորտում ներդրումային գործունեության վրա ռիսկի տարբեր գործոնների միաժամանակյա փոխազդեցության գնահատման մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս իրականացնել ռիսկային իրավիճակների վերլուծություն ներդրումային նախագծի յուրաքանչյուր փուլում:

5. Ֆինանսավորման տարբեր ձևերի հաշվառմամբ կառուցվել է ԼՂՀ շինարարության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության գնահատման տնտեսական մոդել:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության ընթացքում բացահայտված դրույթները կարող են օգտագործվել ԼՂՀ շինարարական կազմակերպությունների ներդրումային ծրագրերի կառավարման մեխանիզմների, ներդրումային ռիսկերի կառավարման մոտեցումների, ինչպես նաև ներդրումային ռեսուրսների ռացիոնալ բաշխման գործընթացների կատարելագործման նպատակով:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները կարող են ունենալ նաև ընդգծված գիտական նշանակություն օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականության մշակման համար: Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել ճյուղային տնտեսագիտության, շինարարության էկոնոմիկայի, ռիսկերի կառավարման դասընթացների դասավանդման գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության արդյունքներն արդեն իսկ ստացել են գործնական կիրառություն շինարարության ոլորտում տնտեսական գործունեություն ծավալող «ՊԱՆՏ» ՍՊԸ-ում, ինչն իր անմիջական արտացոլումն է գտել 2000-2016թթ. Նշված կազմակերպության տնտեսական ցուցանիշներում: Սույն հետազոտության արդյունքների կիրառումը «ՊԱՆՏ» ՍՊԸ-ին հնարավորություն է տվել.

- կատարելագործել ներդրումային ռիսկերի կառավարման մոտեցումները՝ նվազագույնի հասցնելով անցանկալի կորուստները,
- արդյունավետ տեղաբաշխել միջոցները՝ էականորեն բարձրացնելով շահութաբերության մակարդակը,
- միավորել կառավարման տարբեր մակարդակներում ռիսկերի կառավարմանն ուղղված ջանքերը՝ ապահովելով արդյունավետության առավել բարձր մակարդակ:

Հետազոտության արդյունքները քննարկվել են Արցախի պետական համալսարանի կառավարման ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են 2011 թ. ՌԴ Պուշչինո և 2012թ. Դուբնա քաղաքներում կազմակերպված միջազգային գիտաժողովներում ներկայացված հոդվածներում: Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական մոտեցումները և հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված գիտական վեց հոդվածներում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 158 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումային ռիսկերի կառավարման տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում ուսումնասիրվել են շուկայական տնտեսության պայմաններում ռիսկի գործոնի կարևորությունը՝ ի տարբերություն վարչահրամայական տնտեսական համակարգի, որի ժամանակ ներդրումների հիմնական ֆունկցիան հիմնական ֆոնդերի «գործարկումն» էր, իսկ այժմ ներդրումների դերն ու նշանակությունն առավել առանցքային են և համընդգրկուն: Ներդրումներին է վերապահված կայուն տնտեսական զարգացման ապահովման հիմնական շարժիչ ուժի

դերը, ինչն իր արտացոլումն է գտնում հիմնական մակրոտնտեսական փոփոխականների համատեքստում: Մասնավորապես, արդյունավետ ներդրումային քաղաքականության շնորհիվ ստեղծվում են նոր աշխատատեղեր՝ հանգեցնելով գործազրկության կրճատմանը, օպտիմալացվում է տնտեսության կառուցվածքային հիմքը, աճում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը՝ հանգեցնելով բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Ներդրումային ակտիվության ցանկալի մակարդակի ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ ներդրումային միջավայր: Ըստ Մ.Մելքումյանի՝ ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական, կենցաղային, հոգեբանական և այլ այնպիսի գործոնների ամբողջություն է, որը, վերջին հաշվով, կանխորոշում է ներդրումների ռիսկի աստիճանը, դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունները և կենտրոնացնում ներդրողի կոնկրետ շահերն այնպիսի գործարար տարածքում և կոնկրետ ժամանակահատվածում, որտեղ ներդրողից պահանջվում է ունակությունների և ջանքերի խտացում[1]:

Ներդրումային միջավայրն, ըստ հիմնական կառուցվածքային բաղադրիչների, կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով /Գծապատկեր1.1/.



Գծապատկեր 1.1. Ներդրումային միջավայրի կառուցվածքն՝ ըստ հիմնական բաղադրիչների

Ներդրումային միջավայրի բարենպաստ կամ անբարենպաստ լինելու հանգամանքը կախված է վերոնշյալ բաղադրիչներից:

[1]Մ. Մելքումյան «Բիզնես էկոնոմիկա», Երևան, 2002, էջ 397

Շինարարական նախագծերի իրականացման գործընթացում, երբ ռիսկայնության մակարդակը մոտենում է թույլատրելիության սահմանին, կազմակերպության ղեկավարությունը «գործարկում է» ռիսկերի կառավարման ակտիվ միջոցառումների համակարգը: Դրանք վերաբերում են տեղեկատվական հոսքերի, շփումների, մատակարարումների և մարդկային ռեսուրսների, ինչպես նաև ֆինանսական հոսքերի կառավարման գործընթացներին:

Շինարարությանն առավել բնորոշ ռիսկերի դասակարգումը ներկայացվել է հետևյալ աղյուսակի միջոցով (աղյուսակ 1.1).

Ներդրումային շինարարական նախագծերի իրականացման հետ կապված ռիսկերի այսպիսի դասակարգումը նպաստավոր հիմք է նախապատրաստում ռիսկերի հստակ և հիմնավորված գնահատման համար, ինչն էլ հանդիսանում է ռիսկերի կառավարման գործընթացի արդյունավետության վճռորոշ գործոններից:

Սակայն, որքան էլ գիտականորեն հիմնավորված լինեն ռիսկերի դասակարգման մոտեցումները, վերջնարդյունքը կախված է ռիսկ-մենեջմենթի որակից[2]:

Շինարարության ռիսկերի դասակարգումը

Աղյուսակ 1.1

Ներդրումային ռիսկ	**Ձեռնարկատիրական ռիսկ**
1.Շինարարությունն ավարտին չհասցնելու ռիսկ	1.Շինարարական նախագծի իրականացման ռիսկ
2.Ծախսերի չնախատեսված աճի ռիսկ	
3.Արտադրական ռիսկ	
4.Շուկայական ռիսկ	2.Շինարարական կազմակերպության տնտեսական գործունեության հետ կապված ռիսկեր
5.Ֆինանսական ռիսկ	
6.Նախագծի պահպանման ռիսկ	

Նկատի ունենալով, որ շինարարական աշխատանքները մշտապես առնչվում են ներդրումային որոշումների հետ, առանձնակի կարևորություն է տրվում հատկապես ներդրումային ռիսկերին:

Սկզբնական շրջանում ԼՂՀ շինարարության ոլորտում ռիսկային իրավիճակներն առաջանում էին հիմնականում նախագծի մշակման հետազոտական փուլի սխալների հետևանքով: Շատ դեպքերում նախագծի իրականացման իրական արժեքը զգալի գերազանցում էր նախահաշվային ցուցանիշները, ինչը բացասական հետևանքներ էր ունենում թե ներդրողների, թե շինարարական կազմակերպության և հասարակության համար: ՀՀ-ի և ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակներին բնորոշ տարաբնույթ ռիսկերը և դրանց հակազդելու հրամայականը պահանջում են առաջին

[2] Четыркин Е.М. Финансовый анализ производственных инвестиций - М., Дело, 1998. С.256.

հերթին նախագծահաշվային փուլի բացթողումներից բխող ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ:

Ատենախոսության առաջին գլխի շրջանակներում կատարված եզրակացություններից մեկն այն է, որ ԼՂՀ-ում պետության ներդրումային քաղաքականության հիմքում պետք է դրվի այնպիսի համապարփակ միջոցառումների համալիրի մշակում և իրականացում, որը միտված կլինի բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը: Այդ նպատակով առաջարկվում է համակարգված գործողություններ իրականացնել՝ կատարելագործելու հակամենաշնորհային քաղաքականության մոտեցումներն ու մեխանիզմները, միջոցառումներ ձեռնարկել փոքր ու միջին բիզնեսի զարգացումը խթանելու համար, վարել առավել մեղմ ամորտիզացիոն և հարկային քաղաքականություն, ինչպես նաև կատարելագործել սնանկության մասին օրենսդրությունն ու սնանկության գործընթացի կառավարման ընթացակարգերը:

Ատենախոսության երկրորդ՝ «ԼՂՀ շինարարության ոլորտի զարգացման առանձնահատկությունների և ռիսկերի կառավարման արդի վիճակի վերլուծություն» գլխում վերլուծվել են ԼՂՀ տնտեսության՝ հատկապես շինարարության ոլորտի զարգացման դինամիկան բնութագրող առանցքային ցուցանիշներն ու դրանց փոխառնչությունները, ինչպես նաև զարգացման միտումները 2000-2016թվականներին: Ուսումնասիրվել է ԼՂՀ տնտեսական աճի ապահովմանը և շինարարության ոլորտի զարգացմանը նպաստող բոլոր հանգամանքներն ու գործոնները:

ԼՂՀ վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն, 2016թ. շինարարության ոլորտի զարգացման տեմպերը բնութագրող ցուցանիշներն այնքան էլ գոհացուցիչ չեն, ինչն էլ պայմանավորում է շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի դասակարգման և կառավարման համակարգային մոտեցման ներդրման անհրաժեշտությունը: Առանձնակի կարևորություն ունեցող ցուցանիշների դինամիկան ներկայացվել է հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 1.2):

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ԼՂՀ-ում շինարարության ոլորտը բնութագրվում է արտադրական ցիկլի երկար տևողությամբ և ռիսկայնության բարձր մակարդակով: Ընդ որում, պայմանավորված շինարարության առանձնահատկություններով, անհրաժեշտ է պարբերաբար ներգրավել ֆինանսական ռեսուրսներ: ԼՂՀ կառավարությունը մեծ կարևորություն է տալիս շինարարության ոլորտին՝ այն ճանաչելով որպես զարգացման գերակա ուղղություն: Սակայն, ժամանակի ընթացքում գերատեսչական մարմինների առջև դրված սկզբնական խնդիրներն ու նպատակներն էապես փոխվել են: Եթե սկզբնական շրջանում կառավարության հիմնական խնդիրները պատերազմի հետևանքով ավերված քաղաքների և գյուղերի բնակֆոնդի վերականգնումն ու բնակչությանը կենցաղային նվազագույն պայմաններով ապահովելն էին, ապա այժմ իրավիճակն այլ է:

Անհրաժեշտ է լուծել մի շարք մեծ կարևորություն ունեցող սոցիալ-տնտեսական խնդիրներ՝ կապված զոհված ազատամարտիկների ընտանիքներին, փախստականներին և վերաբնակեցվածներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանով ապահովվելու հարցերի հետ:



Գծապատկեր 1.2 ԼՂՀ շինարարական կազմակերպությունների զարգացման դինամիկան բնութագրող հիմնական ցուցանիշների փոփոխությունը[3]:

Հեղինակը մեկնաբանել է ներդրումային շինարարական համալիրի զարգացման միտումները՝ կախված տնտեսության զարգացման ընդհանուր վիճակից: Տնտեսության զարգացման վիճակի առանցքային բնութագրիչներից են հիմնական կապիտալում կատարվող ներդրումների ծավալն ու կառուցվածքը, ներդրումների հետգնման ժամկետը, տնտեսության ճյուղային կառուցվածքը, բնակչության իրական եկամուտների դինամիկան, գնաճի տեմպերը և այլն: Մատնանշվել է, որ վերջին տարիներին ԼՂՀ-ում նվազել են գործող կազմակերպությունների վերակառուցման և ընդլայնման տեմպերը, որի հետևանքով նկատելիորեն դանդաղում է նաև տեխնիկական վերազինումը, մինչդեռ ի հակադրումն սրա, աճում է բնակֆոնդի վերակառուցման և ընդլայնման անհրաժշտությունը, միջազգային պրակտիկայում կիրառվում են շինարարական աշխատանքների կատարման որակապես նոր տեխնոլոգիաներ, որոնք

[3] Нагорно-Карабахская Республика: Становление государствености на рубеже веков. Институт политических исследований, ГНКО, Ереван, 2009, -37стр.

հնարավորություն են տալիս նվազեցնել արտադրության ծախսերը և թողարկել որակապես անհրաժեշտ պահանջներին բավարարող արդյունք: Այս պայմաններում տարեցտարի աճում է այն ռիսկային իրավիճակների թիվը և ռիսկայնության աստիճանը, որոնց լուծման համար կազմակերպության ղեկավարությունը պարտադրված է ձեռնարկելու արտառոց միջոցառումներ: Ներդրումները ԼՂՀ-ում իրականացվում են տարբեր աղբյուրներից: Ըստ ֆինանսավորման աղբյուրների ներդրումների ծավալի ու կառուցվածքի[4]՝ ցուցանիշները վկայում են այն մասին, որ նկատելիորեն նվազել է հումանիտար օգնության միջոցներով իրականացվող շինարարության տեսակարար կշիռը՝ դիտարկվող ժամանակահատվածում 37.2 տոկոսից հասնելով 13.9 տոկոսի: Սակայն ոլորտի հիմնական ձեռքբերումներից է այն, որ նկատելի աճել է կազմակերպության սեփական միջոցների հաշվին իրականացվող ներդրումների տեսակարար կշիռը՝ 2.5 տոկոսից հասնելով 36.4 տոկոսի:

Սա վկայում է այն մասին, որ ԼՂՀ տնտեսությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, իսկ կազմակերպությունները կապիտալի նախասկզբնական կուտակման փուլից աստիճանաբար անցում են կատարել կուտակման փուլին: ԼՂՀ շինարարության ոլորտի զարգացման դինամիկան և տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները 2005-2016թթ. ներկայացվել են հետևյալ գծապատկերի միջոցով (Գծապատկեր 1.3).



Գծապատկեր 2.1.3 ԼՂՀ շինարարության ծավալները
(ընթացիկ գներով 2005թ.- 2016թ-ի համեմատ, տոկոսներով)[5]

Սույն հետազոտության մեջ հիմնական խնդիրներից է շինարարական կազմակերպության ներդրումային գործունեության ինչպես որակական, այնպես էլ քանակական բնութագրիչների բարելավումը, որոնք դիտարկվում են որպես ներդրումային ռիսկերի կառավարման մեթոդներից ու ձևերից ուղղակիորեն ածանցվող

[4]ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Տեղեկագիր, http://www.stat-nkr.am
[5]**ԼՂՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2016Թ.***https://hy.wikipedia.org/*

գործընթացներ, ինչպես նաև առանձնակի կարևորություն է տրվում շինարարական կազմակերպության կառավարման կառուցվածքի կատարելագործման խնդիրներին:

Ռիսկային իրավիճակների առաջացման գործոնները կարող են լինել ինչպես կայուն, այնպես էլ փոփոխական: Այդ գործոնների ազդեցության օբյեկտիվ վերլուծությունն անհնար է առանց ռիսկերի կառավարման և վերլուծության յուրահատուկ մեթոդների կիրառման[6]:

Աշխատության երկրորդ գլխում հետազոտություն է կատարվել նաև ԼՂՀ-ում ՀՆԱ-ի, տնտեսական աճի, սպառողական գների ինդեքսի, բանկային վարկերի միջին տոկոսադրույթների, աշխատանքի շուկայի և քաղաքական (ԼՂՀ-ին առանձնահատուկ) բարդ իրավիճակում մատակարարների հետ հարաբերությունների ազդեցությունները ներդրումների կառավարման գործընթացին:

Ռիսկի պայմաններում առավել արդիական է դառնում կանխատեսման մեթոդների մշակումը, ինչպես նաև տնտեսա-մաթեմատիկական և էկոնոմետրիկ (ինչպես վիճակագրական, այնպես էլ փորձագիտական) մոդելների կիրառմամբ կանխատեսման համակցված մեթոդների մշակումը[7]:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումային ռիսկերի կառավարման կատարելագործման հիմնուղիները և դրանց կիրառման հնարավորությունները ԼՂՀ շինարարության ոլորտում» գլխում ներկայացվել են ատենախոսի մոտեցումները ԼՂՀ-ում շինարարության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման պետական քաղաքականության կատարելագործման ուղղությունների վերաբերյալ: Ատենախոսության հեղինակը դիտարկել է ներդրումային ռիսկերի կատարելագործման կառուցակարգերի կիրառումը «Պանտ» ՍՊԸ-ում:

Գլոբալացումը և համացանցն էական փոփոխություններ մտցրեցին շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման տեսության և պրակտիկայի մեջ: Համացանցը ծնեց սկզբունքորեն նոր հնարավորություններ և համապատասխանաբար նոր ռիսկեր: Տեղեկատվական և տրանսպորտային տեխնոլոգիաների զարգացումն ընդլայնեց ոչ միայն համագործակցության շրջանակները, այլ նաև դրա հետ կապված վտանգները՝ ուժեղացնելով «դոմինոյի էֆֆեկտի» և շղթայական ռեակցիաներից բխող վտանգները:

Կարծում ենք, որ ԼՂՀ-ում շինարարության ոլորտի զարգացման տեսանկյունից ելնելով, առաջիկա տարիներին կառավարության հիմնական խնդիրներից պետք է լինի շինարարական երաշխիքների տրամադրման ու ներդրումային ռիսկերի նվազեցման ինստիտուտների ձևավորումը: Ենթադրվում է, որ շինարարության ոլորտի զարգացման

[6]Баканов М.И., Шеремет А.Д., Теория экономического анализа. М., Финансы и статистика, 1999
[7]Гмурман В.Е., Теория вероятности и математическая статистика. М, 1999

արդի միտումների պայմաններում երաշխիքների դերն ու նշանակությունը նկատելիորեն բարձրանալու են մոտ ապագայում:

Ներկայումս նկատվում է ԼՂՀ-ի հիմնական ֆոնդերում կատարվող ներդրումների ծավալի կրճատում, որը հանգեցնում է մյուս ոլորտներում արտադրական հնարավորությունների նվազմանը: Նոր շինարարական տեխնիկա ձեռք բերելու տնտեսական և քաղաքական դժվարությունների պատճառով ԼՂՀ-ում տեղի է ունենում բարոյապես մաշված տեխնիկայի կիրառում, որը բնականաբար աչքի է ընկնում արտադրողականության ցածր մակարդակով, հարկադիր պարապուրդների մեծ տևողությամբ, ինչն էլ հանգեցնում է վերջնական արդյունքի թողարկման ծավալների նվազեցմանը:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք նկատել, որ հիմնական կապիտալում կատարվող ներդրումները հնարավոր է խթանել հետևյալ գործողությունների շնորհիվ.

1. Անավարտ շինարարական օբյեկտներն ավարտին հասցնելու տնտեսական մեխանիզմների բացահայտում և իրագործում,
2. Բնակչության խնայողություններն իրական ներդրումների վերածելու մեխանիզմների բացահայտում և կիրառում,
3. Շինարարության ոլորտում աճի ապահովում՝ շնորհիվ արտադրական պոտենցիալի լիարժեք օգտագործման,
4. Ներդրումային գործունեության նորարարական ուղղվածության ապահովում,
5. Շինարարական ընկերությունների ներդրումային գրավչության ապահովում՝ շնորհիվ շինությունների տակ գտնվող հողերի և սարքավորումների նկատմամաբ սեփականության իրավունքի հատուկ որոշման,
6. Ամորտիզացիոն քաղաքականության կատարելագործում,
7. Անարդյունավետ հիմնական ֆոնդերի դուրս բերումը շրջանառությունից,
8. Նոր տեխնոլոգիաների, մեքենաների, սարքավորումների ներմուծման ճկուն քաղաքականության մշակում և իրականացում,
9. Հիփոթեքային համակարգի կատարելագործում:

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ամփոփ արդյունքները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները: Դրանցից հիմնականները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. «Ռիսկ» հասկացության և ռիսկերի դասակարգման տարբեր մոտեցումների քննական վերլուծությունը և շինարարության ոլորտում ռիսկերի դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը բավարար գիտական հիմք են նախապատրաստել շինարարական կազմակերպության ռիսկերի այնպիսի դասակարգման համար, որը հնարավորություն է տալիս ինչպես բացահայտել

դրսևորվող տարբեր ռիսկերը, այնպես էլ առանձին ռիսկի գործոնների զարգացման միտումները:

2. 2000-ական թվականներից ԼՂՀ տնտեսությունում դրսևորվող ներդրումային ակտիվությունը իր անմիջական ազդեցությունն է ունեցել նաև շինարարության ոլորտի վրա, մասնավորապես՝ հիմնական կապիտալում կատարվող ներդրումների կառուցվածքում կայուն աճել են մեքենա-սարքավորումների ձեռքբերման ծախսերը 2000թ. 29.9 տոկոսից 2010թ. աճելով մինչև 37.1 տոկոս, իսկ 2016թ.՝ 42.5 տոկոս: Սա վկայում է այն մասին, որ ԼՂՀ շինարարության ոլորտը և տնտեսությունն ընդհանրապես դրսևորում են աշխուժացման միտումներ: Սակայն ԼՂՀ-ում թե հիմնական կապիտալում ներդրումները, թե շինարարական աշխատանքները տարածաշրջանային առումով անհամաչափ են բաշխված: Առաջատար են համեմատաբար խիտ բնակեցված կենտրոնները՝ Ստեփանակերտ, Շուշի, Մարտակերտ, Մարտունի և Ասկերան:

3. Չնայած զարգացման դրական միտումներին, ԼՂՀ շինարարության ոլորտը բախվում է թե միկրոմակարդակի, թե մակրոմակարդակի լուրջ խնդիրների: Մակրոմակարդակի խնդիրներից են ուղղահայաց կոշտ ղեկավարման մեխանիզմների բացակայությունը, բյուրոկրատական քաշքշուկները, միասնական սակագների և տեղեկատվական բազաների բացակայությունը, շինարարության ոլորտի արդյունքների էկոլոգիական անհամապատասխանությունը, շինարարական ներդրումային նախագծերի մասնակիցների միջև փոխհարաբերությունների ոչ հստակ կանոնակարգվածությունը և այլն: Միկրոտնտեսական խնդիրներից կարելի է նշել կիրառվող շինանյութերի ցածր որակը, վճարունակ պահանջարկի սահմանափակությունը, սեփական ռեսուրսների անբավարարությունը, վարկային ռեսուրսների նկատմամբ սահմանվող բարձր տոկոսադրույքները, ֆիզիկապես ու բարոյապես մաշված շինտեխնիկան և այլն:

4. Սույն աշխատանքում կատարված վերլուծությունները հիմք են տալիս պնդելու, որ ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում անհրաժեշտ է մշակել շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման նոր մոտեցում, որը հնարավորություն կտա հաշվի առնել կազմակերպության տարաբնույթ նպատակները, խնդիրները և կառավարման ենթակառուցվածքի առանձնահատկությունները:

5. Այս սկզբունքների վրա կառուցված շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ներդրումային գործունեության բոլոր փուլերում հստակ կանոնակարգել կառավարման յուրաքանչյուր օղակի գործառույթները՝ դրանով իսկ հստակեցնելով յուրաքանչյուրի պարտականություններն ու իրավունքները: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս իրականացնել շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի համակարգային կառավարում:

6. Շինարարական կազմակերպության ներդրումային ռիսկերի կառավարման համակարգում առաջին հերթին պետք է ընդգրկել այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն օրենքներին և կանոններին շինարարական աշխատանքների համապատասխանություն: Այնուհետև շինարարական փաստաթղթերի մշակման գործընթացում ռիսկի կառավարման մասնագետները պետք է վերլուծեն, հստակեցնեն և կանոնակարգեն շինարարական նախագծի մասնակիցների փոխհարաբերությունները: Բացի դրանից, անհրաժեշտ է ձևավորել ապահովագրական և երաշխիքային պորտֆելներ: Փաստաթղթերի նախապատրաստման փուլում ռիսկերի կառավարման ծրագիրն արդեն իսկ պետք է ամբողջությամբ պատրաստ լինի:

7. Շինարարական կազմակերպության կողմից երկարաժամկետ ներդրումներ ներգրավելու հետ կապված խնդիրների վերլուծությունը հնարավորություն է տվել պարզել, որ հիմնական խոչընդոտներն են՝ ապահովագրության և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոչ լիարժեք իրավական բազան ապահովագրական երաշխիքների ճկունության ոչ բավարար մակարդակը, շինարարական նախագծի մասնակիցների անբավարար փորձը, ինչպես նաև շինարարական ռիսկերի էության ու բնույթի և դրանց կառավարման կարևորության վերաբերյալ գիտակցության ցածր մակարդակը:

8. Արդի պայմաններում շինարարական կազմակերպության ռիսկերի կառավարման հայեցակարգերն իրականացվում են որոշակի ձևերով ու մեթոդներով: Սույն աշխատանքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ներդրումային ռիսկերի լոկալացման այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են ռիսկերի քարտեզագրումը, ռիսկային իրավիճակների մոդելավորումն ու ներդրումային գրավչության կառավարման տեխնոլոգիաների ձևավորումը, ինչպես նաև ներդրումային գործունեության ռիսկերի կառավարման ալգորիթմի մշակումը: Ընդ որում, ներդրումային ռիսկերի լոկալացման գործիքները պետք է հաշվի առնեն շինարարական գործընթացի տեխնոլոգիական շղթայի առանձնահատկությունները:

9. Ճգնաժամային իրավիճակներն ու ռիսկերի դրսևորումը բավականին իրատեսական են, եթե շինարարական կազմակերպության կառավարման համակարգում տեղ են գտնում այնպիսի էական բացթողումներ, ինչպիսիք են անհրաժեշտ փորձի ու գիտելիքների պակասը, տեխնոլոգիական գործընթացների կազմակերպման անբավարար մակարդակը, պատասխանատվության բացակայությունը և այլն: Անկասկած, մեր կողմից առաջարկվող ռիսկային իրավիճակների մոդելավորման և շինարարական կազմակերպության ներդրումային գրավչության կառավարման տեխնոլոգիաների ձևավորումը հիմնված են տնտեսամաթեմատիկական ապարատի վրա՝ մաթեմատիկական մոդելավորում, ներդրումային ռիսկերի ուսումնասիրության տեսամեթոդական մոտեցումներ, էմպիրիկ հաշվարկներ և շինարարական կազմակերպությունների գործունեության փաստացի վերլուծություն:

10. Հետազոտությունների հիման վրա մեր կողմից առաջարկվել է ներդրումային ռիսկերի կառավարման կազմակերպատնտեսական մոտեցում, որը կանոնակարգում է ռիսկի կառավարման ծառայության աշխատանքները՝ նկատի ունենալով վերլուծական և պրակտիկ աշխատանքների ֆունկցիոնալ համապատասխանությունը, գործընթացի մասնակիցների միջև գործառույթների հաջորդականության և փոխհարաբերության պահպանումը, շինարարական կազմակերպության արտաքին և ներքին առանձնահատկությունները: Ներդրումային ռիսկերի նվազեցման միասնական նպատակի պարագայում ռիսկ-մենեջերը նշանակալի ազդեցություն է ունենում շինարարական կազմակերպության ներդրումային պոտենցիալի զարգացման վրա, ինչն անհրաժեշտ է դարձնում ռիսկ-մենեջերի և կազմակերպության տարբեր ստորաբաժանումների ու տարբեր մակարդակի ղեկավար օղակների միջև սերտ փոխհարաբերությունների ձևավորումն ու զարգացումը:

11. Մեր կողմից մշակված և գործնական կիրառության առաջարկված շինարարական նախագծերի ներդրումային ռիսկերի կառավարման ինտեգրված համակարգը ներառում է.

- ներդրումային նախագծի ռիսկերի կառավարման ծրագրի մշակում,
- ապահովագրության ծրագրի մշակում և իրականացում,
- նախագծի փուլերի շինարարական երաշխավորության ծրագրի մշակում և իրականացում,
- ծրագրի մոնիթորինգ,
- ծրագրից շեղումների բացահայտում,
- շինարարության անընդհատության ռիսկերի կառավարում,
- իրավիճակային ռիսկերի կառավարում:

12. Մեր կարծիքով, շինարարական կազմակերպության ներդրումային պոտենցիալի զարգացման ռազմավարության ուղղությունը կանխորոշող հիմնական գործոններն են ֆինանսական վիճակի բարելավումը, ներգրավված վարկային ռեսուրսների տոկոսադրույքն ու կիրառման հնարավորությունները, հիփոթեքային վարկավորման համակարգի ընդգրկման շրջանակները, բյուջետային միջոցների ուղղվածությունը, հարկային բեռն ու ամորտիզացիոն քաղաքականությունը:

13. Օրակարգային անհրաժեշտություն է բնակչության խնայողություններն իրական ներդրումների վերածելու մեխանիզմների բացահայտումը, ինչպես նաև ներդրողների շահերի պաշտպանության բարձր մակարդակի ապահովումը: Անհրաժեշտ է ավարտին հասցնել նաև շինարարության ոլորտում իրականացվող ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային վերափոխումները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ա.Բարսեղյան.«Анализ и оценка экономических рисков в строительной индустрии НКР», Международная школа- конфереция, Анализ и моделирование экономических и социальных процессов, секция S 5, РФ Пущино 24 – 30 январь 2011, Выпуск 18,Лист; 194 – 198:
2. Ա.Բարսեղյան. «Методы управления экономическими рисками в строительстве», II Всероссийской научно-практической /заочной/ конференции Санкт-Петербург, 15-17 января 2011 года, Издательская группа СВИТ, Publishinggroup SViWT, Независимый Исследовательный Институт Развития Рыночных Реформ, Лист; 7-11:
3. Ա.Բարսեղյան, Ի.Հարությունյան.«Математические методы оценки инвестиционных рисков в строительство», Международная школа – конфереция, Анализ и моделирование экономических и социальных процессов, секция S 5, Московская область, Город Дубна, 30. 01.- 03.02.2012, Институт ядерной физики, Выпуск 19, Лист; 222 – 233:
4. Ա.Բարսեղյան. «Математические методы прогназирования инвестиционных рисков в строительной индустрии НКР», Центр научного знания <Логос>, Сборник материалов,II Международная научная конференция <Экономика и управление в XXI веке>, Ставрополь 2012 апрель, Лист; 177- 180:
5. Ա.Բարսեղյան, Ի.Հարությունյան. «Математические методы прогнозирования строительного предприятия в НКР с учетом инвестиционных рисков», Инженерная Академия Армении, <Информационные технологии и управление>, Издательство “Энциклапедия-Арменика”, Выпуск 3, июнь 2012г., Лист; 61-76:
6. Ա.Բարսեղյան. «Методы и модели управления финансовыми рисками в строительной индустрии НКР», ВАК РА жирнал <Информационные технологии управление>, Ереван декабрь 2012, Издательская компания <Рубикон & C°>, Выпуск 19, Лист; 174 – 187:

АНЖЕЛА АЛЕШАЕВНА БАРСЕГЯН

УПРАВЛЕНИЕ ИНВЕСТИЦИОННЫМИ РИСКАМИ В СТРОИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЯХ (НА ПРИМЕРЕ НКР)

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 26 июня 2018г. в 13^{30}, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Настоящая диссертация посвящена изучеию, анализу и управлению инвестиционными рисками в строительстве Народно-Карабахской Республики. Управление инвестиционными рисками в строительстве может быть эффективным лишь при комплексном подходе к процессу его выявления, определения и контроля. Для этого необходимы детальное изучение инвестиционной активности в строительной отрасли, механизмов управления инвестиционными потоками, а также разработка концепции управления инвестиционными рисками с учетом современных тенденций развития в исследуемой области. Следовательно, актуальность темы диссертационной работы определяется необходимостью разработки эффективных моделей управления инвестиционными рисками на всей стадии жизненного цикла строительного проекта.

В настоящее время повышается актуальность управления инвестиционными рисками предприятий и организаций, а в строительной сфере необходимость управления инвестиционными рисками необходимость более чем высока. Проблема состоит в том, что неопределенность хозяйственной ситуации, неизвестность условий, изменения военно-политической и экономичесской обстановки и перспектив вынуждают, одновременно, и предпринимателя, и инвестора принимать на себя риск этих условий. Чем больше неопределенность хозяйственной ситуации при принятии решения, тем выше и степень риска. Из этого следует, что актуальность проблемы состоит в том что, независимо от стабильности социально–политической и экономичесской ситуации, изменений внешней и внутренней среды деятельности любой организации приводит к возникновению рисков, которыми необходимо управлять для успешного достижения конечных целей.

Основной целью диссертации являются разработка моделей управления инвестиционными рисками в сфере строительства, изучение особенностей рисков в строительной индустрии НКР, разработка рекомендаций по анализу и количественной оценке рисков, направленных на снижение рисков инвестиционной деятельности в строительно-предпринимательской деятельности, а так же формирование методов управления рисками при обосновании эффективности деятельности строительной организации. Для достижения поставленной цели, осуществляется рассмотрение ряда логически взаимосвязанных задач, последовательно раскрывающих тему данной работы:

1. изучение методов управления инвестиционными рисками строительной организации в современной экономике;
2. классификация рисков и определение основных направлений снижения рисков инвестиционных проектов в строительстве;
3. определение инвестиционной привлекательности строительной отрасли НКР и выявление существующих проблем в инвестиционной деятельности;
4. реализация методологии системного и программно-целевого подходов к управлению инвестиционными рисками строительных организаций;
5. определение роли государства в активизации инвестиционных проектов и влияние инвестиционных процессов на развитие экономики и строительной отрасли в условиях риска;
6. исследование особенностей принятия решений с учетом инвестиционных рисков, анализ и усовершенствование методов оценки рисков инвестиционных проектов в строительстве;
7. упрощение процедуры управления рисками инвестиционных проектов в строительстве;
8. оценка эффективности управления инвестиционными рисками и построение стратегии развития инвестиционного потенциала в строительных организациях.

Разработаны и обоснованы новые подходы к управлению инвестиционными рисками в строительстве, а также новые формы и пути развития инфраструктуры инвестиционно-строительной деятельности, разработки и внедрения системы управления рисками по инвестиционным проектам.

Наиболее важными научными результатами исследования, обладающими научной новизной, являются:

1. Разработан механизм комплексного управления инвестиционными рисками, который основан на принципах формирования критериальной базы оценки потенциала развития инвестиционной деятельности в сфере строительства.
2. Предложена новая методика оценки риска, оказывающая влияние на развитие инвестиционной деятельности в строительстве в зависимости от степени управляемости риска, позволяющая определить изменения факторов с помощью экономико-математических методов.
3. Разработан организационно - экономический механизм управления инвестиционными рисками - алгоритм принятия решений для эффективного управления рисками на различных этапах риск - менеджмента, который позволит обеспечить координацию работы всех уровней управления, их функциональную согласованность и улучшить мобильность диагностики состояния рисков.
4. Разработана методика определения взаимного влияния факторов на инвестиционную деятельность в сфере строительства, на основе использования экономико-статистических и других методов, которая позволяет проводить анализ рисковых ситуаций на различных этапах реализации инвестиционного проекта.
5. Разработана экономическая модель оценки эффективности финансирования в строительстве НКР, в зависимости от видов финансирования.

ANZHELA ALESHAEVNA BARSEGHYAN

MANAGEMENT OF INVESTMENT RISKS IN CONSTRUCTION ORGANIZATIONS (ON THE EXAMPLE OF THE NKR)

Thesis for the pursuing of the degree of PhD of economics on specialty 08.00.02 - "Economics, management of the economy and its branches".

The defense of the dissertation will take place at 13^{30}, on Jun 26th, 2018, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

SUMMARY

This dissertation is devoted to the study, analysis and management of investment risks in the construction of the Republic of Nagorno - Karabakh. Managing investment risks in construction can be effective only with an integrated approach to the process of its identification, defining and control. For this it is necessary a detailed study of investment activity in the construction industry, mechanisms for managing investment flows, as well as the development of a concept for managing investment risks, taking into account the current trends in the research area. Consequently, the relevance of the topic of dissertation work is determined by the need to develop effective models for managing investment risks at the entire stage of the life cycle of the construction project.

At present, the urgency of managing investment risks of enterprises and organizations is increasing, and in the construction sphere of investment risk management the need is more than high. The problem is that the uncertainty of the economic situation, and the conditions, changes in the military-political and economic situation and prospects compel both the entrepreneur and the investor to assume the risk of these conditions. The greater the uncertainty of the economic situation in making a decision, the higher the degree of risk. It follows that essence of the essence lies in the fact that, regardless of the stability of the socio-political and economic situation, changes in the external and internal environment of the activities of any organization leads to the emergence of risks that need to be managed to successfully achieve the ultimate goals.

The main goal of the thesis is development of investment risk management models in the construction industry, analysis of the risks in the construction industry of the NKR, development of recommendations for analysis and quantitative risk assessment aimed at reducing the risks of investment activity in construction and business, and also the formation of risk management methods when justifying the performance of a construction organization. In order to achieve this goal, a number of logically interrelated tasks are being considered, consistently revealing the theme of this work:

1. studying the methods of managing the investment risks of a construction organization in a modern economy;

2. risk classification and definition of the main directions for reducing the risks of investment projects in construction;
3. determination of the investment attractiveness of the NKR construction industry and identification of existing problems in investment activities;
4. realization of methodology of system and program-target approaches to management of investment risks of construction organizations;
5. determining the role of the state in the activation of investment projects and the impact of investment processes on the development of the economy and the construction industry in a risk environment;
6. study of the specifics of decision making taking into account investment risks, analysis and improvement of methods for assessing the risks of investment projects in construction;
7. simplification of the risk management procedure for investment projects in construction;
8. evaluation of the effectiveness of investment risk management and the construction of a strategy for developing investment capacity in construction organizations.

New approaches to the management of investment risks in construction, as well as new forms and ways of development of investment and construction infrastructure, development and implementation of a risk management system for investment projects have been developed and justified.

The most important scientific results of the research, which have scientific novelty, are:

1. The developed mechanism of integrated management of investment risks, which is based on the principles of the formation of a criterial basis for assessing the potential development of investment in construction.
2. The proposed new methodology for risk assessment, which has an impact on the development of investment in construction, depending on the degree of risk manageability, which allows to determine the changes in factors using economic and mathematical methods.
3. The developed organizational and economic mechanism for managing investment risks is an algorithm for making decisions for effective risk management at various stages of risk management, which will ensure coordination of work at all levels of management, their functional consistency and improve the mobility of diagnosing the state of risks.
4. A methodology has been developed for determining the mutual influence of factors on investment in the construction industry, based on the use of economic, statistical and other methods, which makes it possible to analyze risk situations at various stages of the implementation of the investment project.
5. An economic model for assessing the effectiveness of financing in the construction of the NKR has been developed, depending on the types of financing.